

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Տ Ա Վ ՈՒ Շ Ի Մ Ա Ր Ձ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍԻ

26-րդ ապրիլի 2017թ.

## ՕՐԱԿԱՐԳ

2017 թվականի ապրիլի 26-ին ժ.11<sup>00</sup>-ին կայացած  
ՀՀ Տավուշի մարզխորհրդի նիստի

**1. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ՝ 2016ԹՎԱԿԱՆԻ ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Զեկուցող՝ Հ. Արսլյան - ՀՀ Տավուշի մարզպետ

**2. ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ՏԻՄ-ԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԵՎՏՐԻ, ՀԱՆՐԱՅԻՆ ՄՆԵԴԻ և ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

Զեկուցող՝ Գ. Հարությունյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի Զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի վարիչ

**3. ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ 2016ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ 2016ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Զեկուցող՝ Ռ. Ներսիսյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ

**4. ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ 2017ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Զեկուցող՝ Վ. Սուքոյան -- ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ

**5. ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԶՄԵՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ**

Զեկուցող՝ Գ. Մատինյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի գորահավաքային նախապատրաստության բաժնի վարիչ

**6. Այլ հարցեր**

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

## ՀՀ Տավուշի մարզխորհրդի նիստի

26.04.2017թ.

Ք.Իջևան

Նիստը վարում էր Տավուշի մարզպետ Հ.Աբովյանը:

Մասնակցում էին՝

Նիստը վարում էր ՀՀ Տավուշի մարզպետ Հ.Աբովյանը.

Մարզխորհրդի 41 անդամներից ներկա էին 36-ը:

Նիստին ներկա էին ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալները, մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ, մարզպետարանի աշխատակազմի վարչությունների պետեր, բաժինների վարիչներ, պատասխանատու աշխատողներ:

### 1. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ՝ 2016 թ. ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

ՀՀ Տավուշի մարզպետարանը ղեկավարվելով համապատասխան իրավական ակտերով 2016թ իրականացնել է մարզպետարանի աշխատանքային ծրագրով նախատեսված գործառույթները:

2016թ. ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի էլեկտրոնային համակարգով մուտքագրվել է 7615 փաստաթուղթ և առաքվել է 6150 ելից փաստաթուղթ:

Մարզպետի կողմից կայացվել է 195 որոշում, արձակվել 83 կարգադրություն: Կայացել է մարզխորհրդի 5 նիստ և մարզպետի մոտ հրավիրված 24 խորհրդակցություն:

Հաշվետու տարում ստացվել է 2115 դիմում, 5500 գրություն, ՀՀ կառավարության և վարչապետի 65 որոշում, ապահովվել դրանց մուտքագրումը, հաշվառումը: Վերահսկվել է կատարման ընթացքը և սահմանված ժամկետներում պատասխանների առաքումը:

Քաղաքացիների ընդունելություն է կազմակերպվել Իջևան, Դիլիջան, Բերդ, Նոյեմբերյան քաղաքներում, որին մասնակցել են 405 քաղաքացիներ՝ Իջևան-176, Դիլիջան-41, Բերդ-66, Նոյեմբերյան-122:

Աշխատակազմի 23 քաղաքացիական ծառայողներ, 'Քաղաքացիական ծառայության մասին' օրենքի պահանջների համապատասխան ատեստավորվել են, իսկ 27 քաղաքացիական ծառայողներ գործուղվել և իրենց հերթական վերապատրաստումն են անցել յոթ ուսումնական հաստատություններում:

Աշխատակազմի 3 քաղաքացիական ծառայողներ ստացել են համապատասխան դասային աստիճան, իսկ գլխավոր և առաջատար պաշտոն զբաղեցնող 2 քաղաքացիական

ծառայողների շնորհվել է պաշտոնի անձնագրով սահմանված դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճան:

6 թափուր պաշտոնի համար անց է կացվել մրցույթ, իսկ 1 ժամանակավոր թափուր պաշտոնների զբաղեցման համար կնքվել է ժամկետային աշխատանքային պայմանագիր:

Հաշվետու տարում աշխատանքից ազատվել են 4 աշխատողներ, աշխատանքի են ընդունվել 5 քաղ. ծառայողներ:

Քննարկվեցին բազմաթիվ հարցեր. Հաշվետվությունները ներկայացվեցին ներքոհիշյալ ոլորտներում կատարված աշխատանքների մասին.

- **ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ**
- **ՖԻՆԱՆՍՆԵՐԻ**
- **ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԱՌԵՎՏՈՒՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ**
- **ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ**
- **ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ**
- **ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆՈՒԹՅԱՆ**
- **ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ**
- **ՈՌՈԳՈՒՄ, ԿԱՊ, ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ԷՆԵՐԳԵՏԻԿԱ**
- **ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ ԵՎ ՔԱՂ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ**
- **ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ**
- **ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ**
- **ԸՆՏԱՆԻՔԻ, ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ**
- **ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ**

Մանրամասն ներկայացվեց 2016թ-ին Տավուշի մարզում կատարված աշխատանքները:

### **Հանձնարարվեց՝**

Աշխատակազմի բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին՝ հետևողական լինել ՀՀ Տավուշի մարզի տեղական ինքնակառավարման մարմիններում տեղի ունեցած թերացումները շտկելու ուղղությամբ:

## **2. ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ՏԻՄ-ԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԵՎՏՐԻ, ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ և ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

ՀՀ Տավուշի մարզի 62 բնակավայրերում 2016 թվականին իրականացվել է առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում՝ հսկողություն՝ այդ թվում 649 առևտրի, 52 հանրային սննդի, 51 կենցաղային ծառայության, որի արդյունքում արձանագրվել են խախտումներ 18 առևտրի, 8 հանրային սննդի և 12 կենցաղային ծառայությունների ոլորտում:

Նշված խախտումների արդյունքում նշանակվել է 360 հազ. դրամ տուգանք և գանձվել է 140 հազ. դրամ: Մանրամասները՝ հավելված 1-ում:

#### **Առաջարկվեց՝**

1. Համայնքի ղեկավարներին՝ ձեռնարկել միջոցներ համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայության օրեկտներում ապահովել ՀՀ օրենսդրության դրույթները:
2. Համայնքի ղեկավարներին՝ սեղմ ժամկետում ապահովել նշված տուգանքների գանձման գործընթացը:

### **3. ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ 2016Թ-Ի ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ 2016Թ-ԻՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Մարզի 40 համայնքների 2016 թ. տեղական բյուջեների տարեկան նախատեսված եկամուտների հանրագումարը կազմել է 3285.9 մլն. դրամ, որից սեփական եկամուտները՝ 769.9 մլն. դրամ, որը կազմում է ընդհանուր գումարի 23.4 %-ը, իսկ պաշտոնական դրամաշնորհները՝ 2516.0 մլն. դրամ, այդ թվում ՀՀ պետական բյուջեից տրամադրվող դոտացիան՝ 2214.7 մլն. դրամ:

Մարզի համայնքների 2016 թվականի տարեկան եկամուտների փաստացի մուտքը կազմել է 3229.7 մլն. դրամ, որը կազմում է նախատեսվածի 98.3 %-ը, իսկ սեփական եկամուտների հավաքագրումը կազմել է 718.3 մլն. դրամ կամ կատարվել է 93.3 %-ով:

Ըստ առանձին եկամտատեսակների սեփական եկամուտների տարեկան կատարողականները հետևյալն են.

- հողի հարկ – 2016 թ. տեղական բյուջեով նախատեսվել է 178.4 մլն. դրամ, հավաքագրվել է 149.3 մլն. դրամ կամ կատարվել է 83.7 % - ով:

Հողի հարկի մասով ամենացածր կատարողականներ ունեն հետևյալ համայնքները՝ Այրում 49.4 %, Նորաշեն 50.1 %, Վ. Ծաղկավան 52.6 %, Իծաքար 56.8 %, Աջաջուր 70.0 %:

- գույքահարկ - նախատեսվել է 286.9 մլն. դրամ, հավաքագրվել է 299.0 մլն. դրամ կամ կատարվել է 104.2 %-ով:

Գույքահարկի մասով ամենացածր կատարողականներ ունեն հետևյալ համայնքները՝ Բերքաբեր 62.5 %, Կիրանց 66.0 %, Չինարի 76.7 %, Լուսահովիտ 80.9 %:

- տեղական տուրքեր – նախատեսվել է 37.0 մլն. դրամ, հավաքագրվել է 31.3 մլն. դրամ կամ կատարվել է 84.7 %-ով:

Ամենացածր կատարողականներ ունեն հետևյալ համայնքները՝ Վարազավան 34.8%, Դիլիջան 72.1 %, Տավուշ 73.5 %, իսկ Իծաքար համայնքն ընդհանրապես գումար չի հավաքագրել:

- գույքի վարձակալությունից եկամուտներ – 2016 թ. տեղական բյուջեով նախատեսվել է 100.1 մլն. դրամ, հավաքագրվել է 84.2 մլն. դրամ կամ կատարվել է 84.2 %-ով:

Ամենացածր կատարողականներ ունեն հետևյալ համայնքները՝ Վ. Ծաղկավան 15.4%, Պառավաքար 30.7 %, Իծաքար 39.8 %, Աչաջուր 52.5 %:

«Կառավարության 18.02.2016 թ. թիվ 144-Ն որոշմամբ մարզի սահմանամերձ 23 համայնքների հողի հարկ վճարող ֆիզիկական անձանց ցուցաբերվել է 60.2 մլն. դրամի պետական աջակցություն, որը համայնքների կողմից ներկայացված հարկատուների ցուցակների համաձայն տրամադրվել է համայնքներին: «Կառավարության 21.03.2013 թ. թիվ 271-Ն որոշման 1-ին կետով հաստատված ծրագրի

7-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն համայնքների ղեկավարները հատկացված գումարներն ստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում հողի հարկի փոխհատուցված գումարները մուտքագրում են ավտոմատացված տեղեկատվական համակարգ ըստ հարկատուների, որի վերաբերյալ տեղեկատվություն պետք է ներկայացնել մարզպետարան: Մեր կողմից կատարված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հատկացված գումարները հողի հարկի և գույքահարկի հաշվարկման ավտոմատացված տեղեկատվական համակարգ մուտքագրվել են մասամբ համայնքները հողի հարկի և գույքահարկի տվյալները տեղեկատվական համակարգ չմուտքագրման հետևանքով առաջացնում են ըստ հարկատուների չմուծված հարկային պարտավորություններ, որը հետագայում դիտարկվում է որպես ապառք, որի դիմաց հաշվարկվում են տույժեր և տուգանքներ:

Ինչպես համայնքների կողմից հավաքագրված, այնպես էլ պետության կողմից տրամադրված ֆինանսական աջակցության գումարներն անհրաժեշտ է սեղմ ժամկետում մուտքագրել հողի հարկի և գույքահարկի տեղեկատվական համակարգ, որը հնարավորություն կտա ունենալ ապառքների իրական վիճակն ըստ համայնքների և հարկատուների:

«Կառավարության 31.03.2016 թ. թիվ 344-Ն որոշմամբ մարզի համայնքներին աշխատավարձի գծով 2015 թվականին առաջացող լրացուցիչ ծախսերը ֆինանսավորելու նպատակով հատկացվել է 139.2 մլն. դրամ:

Մարզի համայնքները 2016 թվականին աշխատակիցների աշխատավարձերը վճարել են սահմանված ժամկետում և 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ պարտքեր չունեն:

Մարզի 40 համայնքներից 39 համայնքները, բացառությամբ Ազատամուտ համայնքի, 2017 թվականի տեղական բյուջեները սահմանված կարգով և ժամկետներում հաստատել են: Մարզի 39 համայնքների 2017 թվականի տեղական բյուջեների եկամուտների հանրագումարը կազմել է 3247.2 մլն. դրամ, որից սեփական եկամուտները՝ 822.3 մլն. դրամ, պաշտոնական տրանսֆերտները՝ 2424.8 մլն. դրամ, այդ թվում ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիան՝ 2296.6 մլն. դրամ, որը 81.9 մլն. դրամով ավել է 2016 թվականին հատկացված դոտացիայից:

ՀՀ Տավուշի մարզպետի 10.03.2017 թ. թիվ 01/09.1/935-17 գրությամբ մարզի համայնքներին է տրամադրվել համայնքների տեղական բյուջեների 2018 թվականի նախագծերի կազմման գործընթացում կիրառվող պարտադիր բնույթ կրող մեթոդական ցուցումների փաթեթը, որը միաժամանակ տեղադրվել է նաև ՀՀ Տավուշի մարզպետարանի կայքի „Տեղեկատվական կենտրոն“ բաժնի „Ուղեցույցներ և կատալոգներ“ ենթաբաժնում:

ՀՀ վարչապետի 29.12.2016 թ. թիվ 1256-Ա որոշմամբ սահմանվել է Հայաստանի Հանրապետության 2018 թվականի բյուջետային գործընթացը, որի համաձայն ՀՀ պետական բյուջեից սուբվենցիա տրամադրելու մասին 2018 թվականի ծրագրային հայտը համայնքները պետք է մինչև հունիսի 25-ը ներկայացնեն մարզպետարան, որը ամփոփելուց հետո պետք է մինչև հուլիսի 1-ը ներկայացվի ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն: Առաջարկվում է սահմանված ժամկետներում և սահմանված կարգով մարզպետարան ներկայացնել սուբվենցիայի տրամադրման բյուջետային ֆինանսավորման հայտը՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն ներկայացնելու նպատակով:

ՀՀ Տավուշի մարզպետարանը պատրաստ է մարզի համայնքներին ցուցաբերել մեթոդական և խորհրդատվական օգնություն:

#### **Առաջարկվեց մարզի համայնքների ղեկավարներին՝**

1. Սեփական եկամուտների ցածր կատարողական ունեցող համայնքների ղեկավարներին առաջարկել հետևողական աշխատանքներ տանել տեղական բյուջեներով նախատեսված սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը բարձրացնելու ուղղությամբ:
2. Ձեռնարկել միջոցառումներ 2017 թվականի տեղական բյուջեներով նախատեսված սեփական եկամուտների հավաքագրումն ապահովելու համար:
3. Որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Մ. Մխիթարյանի ու ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ռ. Ներսեսյանի վրա:

#### **4. ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՆ 2016 Թ-ԻՆ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ 2017Թ-Ի ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Գյուղատնտեսությունը հանդիսանում է Տավուշի մարզի տնտեսության կարևորագույն ոլորտներից մեկը: Մարզի բնակչության զբաղվածության ամենաբարձր տոկոսը բաժին է ընկնում գյուղատնտեսությանը, այն կազմում է ավելի քան 65 տոկոս:

2016թ. գյուղատնտեսական համախառն արտադրանքի ծավալը կազմել է 41.3 մլրդ. դրամ, որից անասնապահությունը՝ 25.0 մլրդ. դրամ, բուսաբուծությունը՝ 16.3 մլրդ. դրամ:

Մարզի գյուղատնտեսական նշանակության հողատեսքերը կազմում են 110762.8 հա, որից՝

վարելահող	-25588.4 հա
բազմամյա տնկարկներ –	1902.2 հա, որից՝
խաղողի այգիներ	-1198.1հա,
պտղատու այգիներ	-704.1 հա
խոտհարքներ	– 9401.3 հա
արոտավայրեր	– 63065.6 հա
այլ	– 10805.4 հա
Բացի վերը նշվածը տնամերձերում ևս կան	
բազմամյա տնկարկներ –	2030.8 հա ,որից՝
խաղողի այգիներ	-158.9հա,
պտղատու այգիներ	-1871.9 հա

25588.4 հա վարելահողից 7210.7 հա պատերազմական գործողությունների պատճառով չի մշակվում: 18377.7 հա փաստացի վարելահողից 2016թ. ցանքի տակ է դրվել 16519 հա / +101 հա նախորդ տարվա համեմատ/:

Ոռոգելի տարածքները ըստ հողային հաշվետվության կազմում են 6403 հա, որից 2016թ. ըստ կնքված պայմանագրերի ոռոգվել է 4773 հա:

Մարզի համայնքներում ընթացքի մեջ են գարնան գյուղատնտեսական աշխատանքները: Ավարտվել է պտղատու և խաղողի այգիների էտը և ձևավորումը:

21.04.2017թ. դրությամբ օպերատիվ տվյալներով կատարվել է 557 հա գարնանացան, որից.

Գարնանացան գարի	- 50 հա
Գարնանացան ցորեն	- 6.8 հա
Այլ հացահատիկ	- 25 հա
Հատիկաընդեղեն	- 55 հա
Կարտոֆիլ	- 300 հա



Բանջարեղեն - 80 հա

Կերային մշակաբույսեր - 15 հա

Տեխնիկական մշակաբույսեր - 25 հա

2016թ.մարզի համայնքներում կատարվել է 3015 հա աշնանացան:

ՀՀ կառավարության 2017 թվականի մարտի 9-ի N216- Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գարնանացան ցորենի, հնդկացորենի, ոլոռի, սիսեռի, գարնանացան գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման ծրագրի շրջանակներում համայնքների 33 շահառուների կողմից վճարվել և ձեռք է բերվել 6.22 տոննա գարնանացան գարու /կատարվել է 31.1հա ցանք/, 1.7 տոննա գարնանացան ցորենի /կատարվել է 6.8 հա ցանք/, 0.195 տոննա սիսեռի /կատարվել է 1.5 հա ցանք/, 0,210 տոննա ոլոռի /կատարվել է 1.5 հա ցանք/, 0.097 տոննա եգիպտացորենի /կատարվել է 3.88 հա ցանք:

Հատկացվել է նաև 354 կգ առվույտի սերմացու, կատարվել է 14.16 հա ցանք: Ընթացքի մեջ է առվույտի և եգիպտացորենի սերմացուների ձեռք բերման գործընթացը:

«Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով պարարտանյութերի ձեռքբերման համար» ծրագրի շրջանակներում 2017թ. մարզին հատկացվել է.

- ազոտական պարարտանյութ - 400 տոննա, վճարվել է 310.3 տոննայի համար, տրամադրվել է 245.2 տոննա
- ֆոսֆորական պարարտանյութ - 5 տոննա, վճարվել է 0.55 տոննայի համար, տրամադրվել է 0 տոննա,
- կալիումական պարարտանյութ - 5 տոննա, վճարվել է 1.45 տոննայի համար, տրամադրվել է 0 տոննա:

Պետական աջակցության ծրագրով մայիսից հողօգտագործողներին կհատկացվի նաև դիզելային վառելիք:

2017թ. գարնանը մարզի տարածքներում իրականացված բուսասանիտարական մոնիտորինգի արդյունքներով գյուղատնտեսական հողատեսքերում մկնանման կրծողներով միջին և բարձր վարակվածություն արձանագրված 20 համայնքների հատկացվել է 306 կգ «Ռոդիֆակում Ս» և առավել վարակված 3825հա-ի վրա կատարվել են պայքարի աշխատանքներ:

Մարզի համայնքներում 2017թ. հունվարի 1-ի դրությամբ անցկացված անասնազխաքանակի հաշվառման արդյունքներով հաշվառվել է.

Անվանումը	2016	2017թ.	+/-
Խոշոր եղջերավոր	37624	31213	-6411
այդ թվում՝ կովեր	17606	14042	-3564

Էտոզեր	20069	15574	-4495
Ոչխարներ և այծեր	17508	16028	-1480
Մեղվաընտանիքներ	21819	20449	-1370
Թռչուններ	207698	191391	-16307

Կենդանիների ինֆեկցիոն հիվանդությունների նկատմամբ կայուն անասնահամաճարակային վիճակ ապահովելու, ինչպես նաև կենդանիների և մարդու համար ընդհանուր և վարակիչ /ինֆեկցիոն/ հիվանդությունները կանխելու նպատակով յուրաքանչյուր տարի իրականացվում են հակաանասնահամաճարակային կանխարգելիչ միջոցառումներ:

Պետպատվերի շրջանակներում 2017թ. կանխարգելիչ միջոցառումներ կիրականացվեն կենդանիների 7 հիվանդությունների դեմ:

<<Հայաստան>> համահայկական հիմնադրամի ծրագրի շրջանակներում Լուսաձոր համայնքի տարածքում կառուցված 150 գլխի անասնապահական համալիրում որպես տոհմային կորիզ բուծվում են Եվրոպայից ներկրված <<Սիմենթալ>>, <<Ջերսեյ>> ցեղերի խոշոր եղջերավոր կենդանիներ, որոնց մատղաշները անասնապահական համալիրում կառուցված հորթանոցում պահվում են խմբակային կարգով: Որպես մայրացու 15-ական էգ հորթերը տրամադրվել են Կիրանց, Նավուր, Արծվաբերդ, Գանձաքար, Գոշ, Կողբ/2016թ./ համայնքներում ստեղծված կոոպերատիվներին, որոնց ստացիոնար պահվածքը իրականացվում է <<ՀիմնաՏավուշ>> զարգացման հիմնադրամի կողմից կառուցված միևնֆերմաներում:

2017թ. կկառուցվի ևս մեկ նմանատիպ ֆերմա:

<<Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության զարգացման>> ծրագրի շրջանակներում մարզում 2011թ.-ից իրականացվում է <<Արոտների կառավարման և անասնապահության զարգացման>> ծրագիրը:

Ծրագրում ընդգրկված 25 համայնքներում կատարվել են անասունների ջրարբիացման և սարամասերը իրար կապող ճանապարհների ջրահեռացման աշխատանքներ, արոտագտագործողների սպառողական կոոպերատիվների կողմից ձեռք են բերվել համապատասխան գյուղմեքենաներ և գյուղգործիքներ: 2017թ. կշարունակվի գյուղմեքենաների և գյուղգործիքների տրամադրումը Նորաշենի, Իճաքարի, Ն.Կ.Աղբյուրի և Բերդի սպառողական կոոպերատիվներին:

2017 թվականի մարտի 16-ի նիստում ընդունվել է «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրին հավանություն տալու մասին» որոշումը: Այն ուղարկվել է բոլոր համայնքներին: Ֆերմերային տնտեսությունների կողմից սկսվել է փաթեթի ուսումնասիրման և գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերման գործընթացը:

## Հանձնարարվեց՝

1. Ձեռնարկել լրացուցիչ միջոցառումներ՝ 2012-2016թթ. հատկացված աշխանացան ցորենի սերմացուի գումարների հավաքագրման գործընթացն ավարտելու ուղղությամբ:
2. Ճշտել 2017թ. դիզվառելիքի, պարարտանյութի և սերմացուի պահանջարկը և ներկայացնել նախարարություն:
3. Կենդանիների ինֆեկցիոն հիվանդությունների նկատմամբ կայուն անասնահամաճարակային վիճակ ապահովելու, ինչպես նաև կենդանիների և մարդու համար ընդհանուր և վարակիչ /ինֆեկցիոն/ հիվանդությունները կանխելու նպատակով իրականացնել համապատասխան միջոցներ:

## 5. ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՁՄԵՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 2016թ. նոյեմբերի 11-ի «2016թ. ձմեռային զորակոչ անցկացնելու և զորացրում կատարելու համար» ՆՀ 1138-Ն հրամանագրով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016թ. նոյեմբերի 18-ի թիվ 1224-Ն որոշման պահանջների, ՀՀ Տավուշի մարզպետի 2016թ. դեկտեմբերի 13-ի թիվ 180-Ա որոշմամբ՝

- հաստատվել է մարզի տարածքային զինկոմիսարիատների զորակոչային հանձնաժողովների կազմերը,
- հանձնարարվել է զինկոմներին՝ 2016թ. ձմեռային զորակոչը անցկացնել սահմանված կարգով,
- հանձնարարվել է մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին՝ ղեկավարվելով «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի պահանջներով իրականացնել անհրաժեշտ միջոցառումներ,
- առաջարկվել է համայնքների ղեկավարներին՝ իրավասության սահմաններում ապահովել ձմեռային զորակոչի կազմակերպումը,
- հանձնարարականներ է տրվել և առաջարկվել հիմնարկ-ձեռնարկությունների ու կազմակերպությունների ղեկավարներին՝ ձմեռային զորակոչին սահմանված կարգով աջակցություն ցուցաբերելու:

2016թ. նոյեմբեր ամսին կայացած հանրապետական զորակոչային հանձնաժողովի նիստում քննարկվել է 2016թ. ամառային զորակոչի արդյունքներն ու 2016թ. ձմեռային զորակոչի խնդիրները: Նշվել է տարածաշրջանի բոլոր զինկոմիսարիատների դրական աշխատանքը:

2016թ. ձմեռային զորակոչի ընթացքում հրավիրված մարզային զորակոչային հանձնաժողովի նիստերի ընթացքում քննարկվել են զորակոչին առնչվող տարաբնույթ հարցեր:

Նիստերին քննարկվել են ժամկետային զինձառայությունից խուսափող պատանիների հարցը, որին անմիջապես արձագանքել են մարզային ոստիկանության աշխատակիցները: Հաշվետու ժամանակահատվածում մարզային զորակոչային հանձնաժողովի նախագահի կողմից հաստատվել են տարածքային զինկոմիսարիատների ներկայացրած աշխատանքային պլանները՝

- ռազմական ուսումնական հաստատությունները դիմորդ-թեկնածուներով համալրելու,
- տեղամասին կցագրված նախազորակոչիկներին զինվորական ծառայության նախապատրաստելու հիմնական միջոցառումների,
- ուսումնական հաստատությունների ՆԶՊ ծրագրերով ավագ դասարանի տղաների հետ երկօրյա դաշտային պարապմունքների,
- ՆԶՊ ուսումնասիրող պատանիների հետ հայրենասիրական դաստիարակչական ընդհանուր միջոցառումների,
- ուսումնական հաստատությունների զինղեկների հետ առօրյա մեթոդական հավաքների վերաբերյալ,
- պաշտպանության նպատակով տարածաշրջաններում կցագրման ենթակա տրանսպորտային միջոցներ ունեցող գործող հիմնակ-ձեռնարկությունների և կազմակերպությունների անվանացուցակները :

Վերջին տարիներին մարզի դպրոցներում բավական դրական տեղաշարժ է կատարվել ՆԶՊ դասարանների, փառքի սրահների ձևավորման, սպորտ-հրապարակների, զենքի պահպանման սենյակների կահավորման, ամրացման, ռազմական խաղերի կազմակերպման, ՆԶՊ-ի քաղաքացիական պաշտպանության նյութատեխնիկական բազայի համալրման ուղղությամբ:

2017թ. հունվարի 1-ի դրությամբ զինապահեստներով և զենքով ապահովված են 59 դպրոցներ: Մարզպետի կողմից հանձնարարություն է տրվել 2017թ. վերջնականապես ավարտել բոլոր դպրոցներում ՆԶՊ ծրագրով անհրաժեշտ ուսումնական դասարանների և ուսումնական զենքի ապահովումը:

2017թ. հունվար ամսին մարզում իրականացվել է ձմեռային զորակոչ: Բոլոր զինկոմիսարիատներում մեկնարկը տրվել է հանդիսավոր միջոցառումներով՝ հրավիրվել են գեղարվեստական խմբեր, զինվորական նվագախումբ, նորակոչիկներին բանակ ճանապարհելու բարենաղթանքներով հանդես են եկել պատերազմի վետերաններ, երկրապահ կամավորական

ջրկատների ազատամարտիկներ, ծնողներ, գինկոմիսարիատի պատասխանատու աշխատակիցներ, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ:

Համայնքների ղեկավարները համայնքներում կազմակերպել են հանդիսավոր երեկոներ՝ մասնակից դարձնելով նախագորակոչային տարիքի պատանիների, պատերազմի վետերանների:

ՀՀ Տավուշի մարզի տարածքային գինկոմիսարիատների 2016թվականի ձմեռային զորակոչի առաջադրանքը կատարվել է 90 տոկոսով:

Տարածքային գինկորական կոմիսարիատներում 2016 թվականի ձմեռային զորակոչին ներկայացել են գինկոչիկների 96 տոկոսը:

Ուսումը շարունակելու նպատակով տրվել է տարկետում 28՝

Իջևանի գ/կ - 8

Դիլիջանի գ/կ - 2

Տավուշի գ/կ - 5

Նոյեմբերյանի գ/կ - 13

Ընտանեկան դրության պատճառով ՀՀ ԶՄՕ 13/1 հոդվածով տարկետում է տրվել 1՝

Իջևանի գ/կ - 0

Նոյեմբերյանի գ/կ - 0

Տավուշի գ/կ - 0

Դիլիջանի գ/կ - 1

Տրվել է տարկետում բուժման նպատակով 5 ամսից 3 տարի ժամանակով 108՝

Իջևանի գ/կ - 52

Դիլիջանի գ/կ - 22

Տավուշի գ/կ - 21

Նոյեմբերյանի գ/կ - 13

ՏԶԿ-ներից ներկայացված տեղեկանքների հիման վրա ռազմական ուսումնական հաստատություններ թեկնածու ընտրելու առաջադրանքը կատարվել է 26 տոկոսով:

Կցագրման ենթակա 2000 թվականին ծնված պատանիները կցագրվել են 82 տոկոսով:

Պատրաստվել են <<C>> խմբի վարորդներ 52՝

Իջևանի գ/կ - 23


Տավուշի գ/կ - 29

Բոլոր զինկոմիսարիատներում համալրված են բժշկական հանձնաժողովները, պատվաստումները կատարվել են գրաֆիկին համապատասխան:

Սկսվել և շարունակվում է 2001 թվականի ծնված պատանիների կցագրման աշխատանքները:

1. Առաջարկվեց՝ աջակցել բոլոր համայնքի ղեկավարներին ինչպես նաև հիմնարկ ձեռնարկությունների, կազմակերպությունների ղեկավարներին՝ ձմեռային զորակոչին սահմանված կարգով աջակցություն ցուցաբերելու հարցում:
2. Բոլոր համայնքի ղեկավարներին հանձնարարվեց ակտիվորեն մասնակցել զորակոչից խուսափող երիտասարդներին գտնելու, և բերման ենթարկելու աշխատանքներին:

«ՏԱՎՐԻՄԱՐՉՈՒՄ»



Հ.ԱՐՈՎՅԱՆ